Արձանագրություն N 2

Արագածոտնի մարզի «Թալինի բժշկական կենտրոն» ՓԲԸ հագեցման համար անհրաժեշտ բժշկական կահույքի ձեռք բերման նպատակով կազմակերպված «ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2023/47» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի նիստիխ

ք. Երևան	«27» «Հոկտեմբերի» 2023թ. ժամը 16:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ	Ե. Էլիբեկյան
Հանձնաժողովի անդամներ	Վ.Վահանյան,Ա.Գևորգյան,Հ.Խուրշուդյան,Ա.Գրիգորյան
Հանձնաժողովի քարտուղար	Հ. Սարգսյան

1. Գնման ընթացակարգի հայտերի բացման մասին

(Ե. Էլիբեկյան)

Ընդունել ի գիտություն, որ 18.09.23թ. հրապարակվել է հրավեր էլեկտրոնային աճուրդ համակարգում: Հայտերի ներկայացման վերջնաժամկետը՝ 2023 թվականի հոկտեմբերի 3-ին, ժամը 12:00-ին, իսկ հակադարձ աճուրդի մեկնարկը՝ 2023 թվականի հոկտեմբերի 4-ին ժամը 12:00-ին: 2023 թվականի հոկտեմբերի 4-ին ժամը 12:15-ին գնահատող հանձնաժողովը հրավիրել է նիստ՝ մասնակիցների կողմից ներկայացված հայտերը բացելու նպատակով:

Հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

Հ/Հ	Մասնակցի անվանում	Կազմակերպության էլ. հասցե	Կազմակերպության ՀՎՀՀ
1	«Մեդթրեյդ» ՍՊԸ	info@medtrade.am	00220168
4	«Մեդէքսպերտ» ՍՊԸ	Medexpert077@gmail.com	04229065
6	«Թեոֆարմա» ՍՊԸ	tender@theopharma.am	00471216
9	«Մեդտեխսերվիս» ՍՊԸ	medtechservice@mail.ru	02205001
10	«Երմեդ» ՍՊԸ	adamyanerem@yahoo.com	04721572
11	«ԹԱԳՀԷՄ» ՍՊԸ	gnumner.taghem@gmail.com	01232586
12	«Լինարե» ՍՊԸ	linare50@mail.ru	09212215
13	«Դոնեռ» ՍՊԸ	donernorq@yandex,ru	01052798

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

2. Տվյալներ՝ բացված յուրաքանչյուր ծրարում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության մասին

(Ե. Էլիբեկյան)

Առաջին տեղը զբաղեցրած մասնակիցների կողմից ներկայացված ծրարներում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը, սակայն ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան, իսկ «Դոնեռ» ՍՊԸ-ի հայտում բացակայում է Հավելված 1.3:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

3. Տվյալներ՝ ծրարների կազմման և ներկայացման հրավերի պահանջներին համապատասխանության մասին

(Ե. Էլիբեկյան)

Առաջին տեղը զբաղեցրած մասնակիցների կողմից ներկայացված ծրարները կազմված են հրավերի պահանջներին ոչ համապատասխան: Հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 41-րդ կետի պահանջները գնահատող հանձնաժողովը 13.10.2023թ. որոշեց մեկ աշխատանքային օրով կասեցնել հայտերի գնահատումը և հնարավորություն տալ շտկել մասնակիցներին առձանագրված անհամապատասխանությունները և գնահատող հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային աճուրդ համակարգի միջոցով ծանուցել է մասնակիցներին շտկման մասին: Ստորև ներկայացվում է գնահատող հանձնաժողովի կողմից կազմված շտկման ծանուցումները՝ ըստ մասնակիցների.

«Մեդտեխսերվիս» ՍՊԸ

Հարգելի մասնակից:

«ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2023/47» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ուսումնասիրելով Ձեր կողմից ներկայացված մասնակցության հայտը, արձանագրել է մի քանի անհամապատասխանություններ, որոնք ենթակա են շտկման: Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 41-րդ կետի պահանջները խնդրում ենք մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել Ձեր կողմից առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրերը (տեխնիկական բնութագրերը) մասնավորապես՝ 6-րդ, 7-րդ չափաբաժինների մասով շտկել և ներկայացնել հստակ չափանիշները և երաշխիքային ժամկետները՝ բացառելով «կամ», «համարժեք» և նմանատիպ այլ երկակի մեկնաբանվող արտահայտությունները և «պետք է լինի» բառակապակցությունը: 20-րդ չափաբաժնի համար նշել հստակ չափանիշները առանց «պետք է լինի» բառակապակցության: Շտկված տարբերակները սահմանված ժամկետում ներբեռնել էլեկտրոնային աճուրդ համակարգ:

«Մեդէքսպերտ» ՍՊԸ

Հարգելի մասնակից:

«ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2023/47» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ուսումնասիրելով Ձեր կողմից ներկայացված մասնակցության հայտը, արձանագրել է անհամապատասխանութ, որը ենթակա է շտկման: Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 41-րդ կետի պահանջները խնդրում ենք մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել Ձեր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը (տեխնիկական բնութագիրը) մասնավորապես՝ 1-ին չափաբաժնի մասով շտկել և ներկայացնել հստակ չափանիշներով տեխնիկական բնութագիր, բացառելով «պետք է լինի» բառակապակցությունը: Շտկված տարբերակը սահմանված ժամկետում ներբեռնել էլեկտրոնային աճուրդ համակարգ:

«Մեդթրեյդ» ՍՊԸ

Հարգելի մասնակից:

«ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2023/47» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ուսումնասիրելով Ձեր կողմից ներկայացված մասնակցության հայտը, արձանագրել է մի քանի անհամապատասխանություններ, որոնք ենթակա են շտկման: Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 41-րդ կետի պահանջները խնդրում ենք մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել Ձեր կողմից առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրերը (տեխնիկական բնութագրերը) մասնավորապես՝ չափաբաժիններ 3-ի, 4-ի համար նշել տեխնիկական բնութագրերի հստակ չափանիշները և երաշխիքային ժամկետները, բացառելով «կամ», «համարժեք» և նմանատիպ այլ

երկակի մեկնաբանվող արտահայտությունները, «պետք է լինի» բառակապակցությունը: 19-րդ չափաբաժնի համար նշել տեխնիկական բնութագրերի հստակ չափանիշները բացառելով «կամ», «համարժեք» և նմանատիպ այլ երկակի մեկնաբանվող արտահայտությունները, «պետք է լինի» բառակապակցությունը, ինչպես նաև նշել հստակ երաշխիքային ժամկետ և Ձեր կողմից առաջարկվող ապրանքի հստակ որակի վկայականները: Շտկված հստակեցված տարբերակները ներբեռնել էլեկտրոնային աճուրդ համակարգ:

«Լինարե» ՍՊԸ

Հարգելի մասնակից:

«ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2023/47» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ուսումնասիրելով Ձեր կողմից ներկայացված մասնակցության հայտը, արձանագրել է մի քանի անհամապատասխանություններ, որոնք ենթակա են շտկման: Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 41-րդ կետի պահանջները խնդրում ենք մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել Ձեր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը (տեխնիկական բնութագիրը) մասնավորապես՝ 2-րդ չափաբաժնի մասով նշել հստակ ֆիրմային անվանումը, ապրանքային նշանը, մակնիշը և արտադրողի անվանումը՝ ուղեկցող փաստաթղթերին համապատասխան, առանց թարգմանության, ինչպես նաև ներկայացնել տեխնիկական բնութագրի հստակ չափանիշները բացառելով «պետք է լինի» բառակապակցությունը, ինչպես նաև նշել հստակ երաշխիքային ժամկետ: Շտկված հստակեցված տարբերակը ներբեռնել էլեկտրոնային աճուրդ համակարգ:

«Դոնեռ» ՍՊԸ

Հարգելի մասնակից:

«ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2023/47» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ուսումնասիրելով Ձեր կողմից ներկայացված մասնակցության հայտը, արձանագրել է մի քանի անհամապատասխանություններ, որոնք ենթակա են շտկման: Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 41-րդ կետի պահանջները խնդրում ենք մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել՝ հրավերի պահանջներով Հավելված 1-ը և ներկայացնել հրավերին համապատասխան՝ էլեկտրոնային ստորագրությամբ հաստատված, խնդրում ենք շտկել և շտկված տարբերակը ներբեռնել էլեկտրոնային աճուրդ համակարգ, ինչպես նաև բացակայում է հրավերով պահանջվող՝ ՀՀ ռեզիդենտների համար պարտադիր Հավելված 1.3-ը՝ իրական շահառուների վերաբերյալ տեղեկություններ պարունակող կայքէջի հղումով, որը նույնպես խնդրում ենք ներբեռնել էլեկտրոնային աճուրդ համակարգ: Կարիք կա շտկելու նաև 18-րդ չափաբաժնի Ձեր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում տեխնիկական բնութագիրը՝ հստակ նշել Ձեր կողմից առաջարկվող ապրանքի ֆիրմային անավանումը, ապրանքային նշանը, մակնիշը և արտադրողի անվանումը, շտկել և հստակեցնել առաջարկվող ապրանքի հստակ տեխնիկական չափանիշները, բացառելով «կամ», «համարժեք» և նմանատիպ այլ երկակի մեկնաբանվող արտահայտությունները և շտկված հստակեցված տարբերակը ևս ներբեռնել էլեկտրոնային աճուրդ համակարգ:

17.10.2023թ. էլեկտրոնային աճուրդ համակարգում հասանելի էին մասնակիցների կողմից ներկայացված պահանջված շտկումները: Ծանուցված մասնակիցներից՝ «Մեդտեխսերվիս», «Մեդէքսպերտ» և «Մեդթրեյդ» ՍՊԸ-ները սահմանված ժամկետում ներկայացրել էին շտկումները,ուստի վերջիններիս հայտերը գնահատվում են բավարար: «Լինարե» և «Դոնեռ» ՍՊԸ-ները սահմանված

ժամկետում շտկումներ չեն ներկայացրել, վերջիններիս հայտերը մերժվում են և նշված մասնակիցները զրկվում են պայմանագիր կնքելու իրավունքից:

Որոշվեց. Շտկումներ ներկայացրած մասնակիցներ՝ «Մեդտեխսերվիս», «Մեդէքսպերտ» և «Մեդթրեյդ» ՍՊԸ-ների հայտերը գնահատել բավարար:, իսկ «Լինարե» և «Դոնեռ» ՍՊԸ-ների հայտերը մերժել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

4. Մասնակիցների առաջարկաց գների մասին

(Ե. Էլիբեկյան)

04.10.2023թ. կայացած հակադարձ աճուրդից հետո մասնակիցների կողմից ներկայացված վերջնական գները ներկայացվում են կից ֆայլով (excel):

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

5. Հրավերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին

(Ե. Էլիբեկյան)

Հրավերի վերաբերյալ հարցումներ չեն ներկայացվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

6. Ընթացակարգի ամփոփման մասին

(Ե. Էլիբեկյան)

Հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 18.05.2017թ. թիվ 534-Ն որոշման պահանջները և մասնակիցների կողմից ներկայացված հայտերը.

Որոշվեց. «ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2023/47» ծածկագրով գնման ընթացակարգը ամփոփել, հաղթողներ ճանաչել և կնքել պայմանագրեր՝

- «Մեդէքսպերտ» ՍՊԸ-ն՝ 1-ին չափաբաժնի մասով՝ 2,690,000 ՀՀ դրամ պայմանագրային գումարով,
- «Թեոֆարմա» ՍՊԸ-ն՝ 5-րդ, 11-րդ և 12-րդ չափաբաժինների մասով՝ 7,926,943 ՀՀ դրամ պայմանագրային գումարով,
- «Մեդտեխսերվիս» ՍՊԸ-ն՝ 6-րդ, 7-րդ, 8-րդ, 9-րդ, 10-րդ, 13-րդ, 14-րդ, 15-րդ, 16-րդ, 17-րդ և 20-րդ չափաբաժինների մասով՝ 8,737,540 ՀՀ դրամ պայմանագրային գումարով,
- «Մեդթրեյդ» ՍՊԸ-ն՝ 3-րդ, 4-րդ և 19-րդ չափաբաժինների մասով՝ 3,444,000 ՀՀ դրամ պայմանագրային գումարով:

Մերժել ոչ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցների հայտերը՝ «Երմեդ» և «ԹԱԳՀԷՄ» ՍՊԸ-ների ըստ չափաբաժինների՝ ներկայացված գնային առաջարկները գնման գները գերազանցելու պատճառով՝ համաձայն ՀՀ Կառավարության 18.05.2017թ. թիվ 534-Ն որոշմամբ հաստատված կարգի 10-րդ կետի 2-րդ մասի:

Որոշվեց՝ «ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊԱՁԲ-2023/47» ծածկագրով գնման ընթացակարգը 2-րդ և 18-րդ չափաբաժինների մասով հայտարարել չկայացած՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի՝ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցներ «Լինարե» և «Դոնեռ» ՍՊԸ-ների հայտերը

մերժելու պատճառով՝ հիմք ընդունելով ՀՀ կառավարության 18.05.2017թ. թիվ 534-Ն որոշմամբ հաստատված կարգի 10-րդ կետի 2-րդ ենթակետը:

Որոշվեց. «ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2023/47» ծածկագրով գնման ընթացակարգի համար անգործության ժամկետ սահմանել 28.10.2023թ.-ից մինչև 06.11.2023թ.-ը ներառյալ ընկած ժամանակահատվածը՝ հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ կետը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ ---------- Ե. Էլիբեկյան

Անդամներ՝ _____ Վ. Վահանյան

---------- Ա. Գևորգյան

_____ Հ. Խուրշուդյան

---------- Ա. Գրիգորյան

Քարտուղար՝ ---------- Հ. Նարգսյան